

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

Շ Ա Ր Ա Կ Ա Ն Ն Ե Ր Ի Ո Ւ Ս Ո Ւ Մ Ն Ա Ս Ի Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

Բաղդատելով այս գրուածքը Հռիփսիմեանց Գ՛. Է՛ք. «Անսկիզբն բանն աստուած», Ուսոնգեանց Գ՛. Է՛ք. «Անձնուելի բանց աստուած» և Վարդանանց Գ՛. Ե. Է. «Արասհրաշ պսակաւոր» սքանչելի շարահաններն հետ աւելորդ չենք հասարում՝ զնել այստեղ սոյն գրուածքի մի քանի հաստուածներն հետ ստիպու ինչ նմանողութիւն ունեցող այն հաստուածները որոնք զանուամեն յիշեալ երեք շարահաններն մէջ: Ինչան և ի տես ընթերցողին զնուամենք « Է՛ք. Է՛ք. Է՛ք. և Արա. Է՛ք. »:

«Շարական. Սուբրոց. Վարդանացն. Աւրհնու [Թիւն].»

- « զԿ. Անթառամ սիրո ծնունդըք սիրեցեալք ի քէ. իմաստուն ճարտարագետք հաստատութիւն եկեղեցւո. զառ ի նոյն յուսո շաւիզս թելադրիչք որդոց մարդկան. աննախանձ առատութ. զամենեսեան ճոխացուցէք:
- Բանին հաւր բարբառո. հետեւեցայք արժանապէս. բռնամբ խաչին թեթեւացեալք զիմեցայք առ զաւրութիւն. ի քաղաքն անխախտելի. առ կարպետ ճանապարհին. նախահրաւէր ուրախութեանն ժամանեալ ի վաերումն:
- Գանձին ճածիկեցեղոյ տենչմա՛ր վառեալք ի կեցաղումս. առ ի ստացումն փութացեալք երազաբայլ ոտիւք հողոց. ընդ պարզելին ամիտիեցայք ըզպարզելիչ փարթամութենն. անկապուտ հաստատուն առմամբ եղէք երջանկացեալք:
- Պարձայք զարձումնն զովելի անստուերիւր ճանապարհաւ. առ որ կոչին ըզմեղաւորս ի խրախութիւն առադաստին. եւ մաքրեցայք ի չարչար զարձման տղմոյն պտեղութեան.
- ¹ Գրայծառացեալ արեամբ ձերով ընծակեցէք հանգիստադրին:
- ² Երկնաւոր թաղաւորին զինուորեցայք արիարար. առ ի վանումնն բանսարկուին եւ որ նոպաւ պատերազմեր. նահատակեալք քաջութեամբ արկէք տապաստ ըզմողորեայսն.
- ³ Եւ ընդալայք ի քէ ըզյաղթանակ անմահութեան:
- Ջաւրութեամբ հաւր զաւրութեն ի ճակատուն առաքինեալք.
- ⁴ զանհաւատիցըն բազմութիւնն ազատարար ընթաղրեցայք.
- ⁵ Եւ ձերով հեղմամբ արեամբ պսակեցայք զեկեղեցի.

1 Ն-բ-է. Թ. «... Է՛ք. ընդ նոսին պսակելով ի յերկնաւոր հանգիստադրէն»
 2 Ն-բ-է. Բ. «Երկնաւոր թաղաւորին զինու յաղթեալ պատերազմին»
 3 Ա-Ն-Ն-Ն. Բ. «զի ընկալցին ի քէն քրիստոս զանապական փառաց պսակն»
 4 Ա-Ն-Է. Գ. «Անթառամք զմահու խրախտումն ընդդէմ՝ մեղացն վառեցան»
 5 Ն-բ-է. Ա. «Վարդազոյն արեամբդ քով պսակեցեր զեկեղեցի»
 » Բ. «Վկայ եղեալ հեղմամբ արեան պսակեցաւ»
 » Զ. «խաչելոյն վկայ եղեալ պսակեցաւ արեամբն իւրով»:

դարձեալ ի նոյն հաստատելով յիսկըցրանէ պայծառութիւն:

⁶ Եւսպիւս բարոյն սարսիմամբ վերագարձայք ի ստորնայնոցս,
 առ որ ըստեղծն խկրցրանէ ի կերպարանս կրանութենն,
 լինել բարեատհմիկ եւ քաղաքին սրբո ժառանգք,
 յորմէ չարին ելոյժ նախանձ, եւ ժանդացոյց անտիւ մեղաց:

Ընդ մեծի պատարաղին նախանձեցայք ի պատարագ:

⁷ Ըզվրկականն ըմպել զրաժակ եւ մկրտեալ արեամբ ձերով,
 ի քաւութիւն մորրութեանն եւ ի լուծումն խաւարի,
 յոր բանութիւ չարասիրին խարէութեամբ հաւանեցոյց:

Թշնամեացն անաւրինաց ընդգիծացայք ի պատերազմ,
 ըզգաղանիս որողայթիցն նհանջումն առեալ ի վերջ:

⁸ Եւ ընթանալ պատրաստարար առ զաւրազլուին առաքինեաց,
 ի ձեռանէ նորա առնուլ ըզգեղեցիկ թազագլուութիւնն:

Ժողովեցոց կատարելոց եւ անգրանկաց գրելոց յերկինս,
 առթեցայք ի քէ որ ըզմեղացն ելոյժ կապանս,
 լինել հաղորդ փառաց ուրախուն եւ ցնծութեան,
 ի քաղաքին վերնումն սիոն ի լուստիայն եմ:

Ի քեզ տր յուսոցան, հալածականքն ի խաւարի,
 փախուցեալք ի թշնամոյն եւ ի նորին որագայթից,
 որ կոչես ըզմեղաւորս յանապաշխար կենաց հանդիսան,
 եւ նաղելի բեռամբ շնորհես ըզքաղցրայոյզ կենաց պարգեւս:

Լուսատու խաւարելոց եւ սյցելու մոլորելոց,
 որ ըզգիշեր մեղաց լուծեր զաշխարհակուլ համատարած,
 արեզակն արդարութի որ ի հաւրէ մեղ ծաղեցար,
 եւ մտշեցեր ըզստուեր մահու ի տեսակէ ազգի մարդկան:

Խաղաղութեան անձառելո առատարար պարզւատու,
 եւ հաշտարար հողոյդ բաշխիչ ի խռովութեան մերս քակտումն,
 ըզնոյն եւ այժմ շնորհեցեր եկեղեցեաց հայաստանեայց,
 ի վերստին նորոգութիւն կործանելոց յանաւրինաց:

Ծանեար քս ըզքոյան եւ հեռացար յուրացելոցն,
 ժողովեալ ըզվարատեալն ի դառնաթոյն աւձին շէման,
 եւ կանկնեալ ի գլորմանէ ըզգարկուցեալն պատրանաւք,
 կենդանութիւնդ մեռելոց, եւ ցնծութիւն արամեցելոց:

Կոչեցան խոստովանողք եւ կարդեցան ընդ մարտիրոսս,
 լլցուցին ուրախութեք ըզգուարթնոց երկնից բանակս,

⁹ Եւ մտին ի կոչարան փեսասացեալ իմաստութեանդ,
 յանգրաւական ընթրեաց խրախուճս ընդ շինողին զուրախարանն:

Հաճեցաւ **) տր ընդ նուէր պատարագացն ողջակիզաց,

6 ն. ւ. Եւսպիւս բարոյն գիտմամբ ընդդէմ մեղացն վառեցաւ.
 7 » Գ. զփրկականն ըմպել զրաժակ եւ մկրտեալ արեամբն ի բով.
 8 » Ա. Նորահրաշ պատկաւոր եւ զօրագլուխ առաքինեաց.
 9 Ա շ շ — Գ. իմաստունք երեւելով ընդ փեսայն մտին յառագաստն.
 **) Թերևս—հաճեցար.

եւ ոչ տանջանք անտանելիք կակղացուցին ըզփութաբանս.
ըզմեծանձանց նահատակացն հրեշտակաց մարմնաւորաց.
որոց եղեր հանդիսակից. ի չնաշխարհիկ տեսարանին:

Պսակաւք երկնաւորաւք եւ անթառամ փառաց լուսով.
զարդարեցեր ըզքաջացեալն առ հակամարտ չարին մրցողս.
առաջին պսակաւորդ յորդորիչ զանգիտողաց.
ի չարաչար սպառնալեաց եւ յերկիւղ մահաբերաց:

Ջախեցին ըզբանասարկուն եւ զընդ նովաւ իշխանութիս.
կոխելով վստահութեամբ ըստ սահմանեալ քում հրամանաց.
զաւրութիւնդ անհերքելի զաւրացուցիչ լքման մերո.
եւ յոգնազան յուսով բարեաց յանմահութի մեզ հրաւիրակ:

15 Ուամկական ազգ աշխարհի եղեն երկնի քաղաքակիցք.
եւ դասակից փողերդութեան հոգոց սրոց զերակալից.
46 երրորդութեանդ նուազիչք զերեքսրբեան փառատրութիւն.
եւ տեսողք անձառ լուսո միանական անձութեանդ:

Սրբեցին ըզտիեզերս մաքրագործ արեամբք իւրեանց.
17 եւ ուսուցին ամենեցուն անձին իմաստութիւն.
արդարանալ որդոց նորա. որով ինքեանք իմաստնացան.
եւ ըզխաւարն անդիտութեան հալածեցին յոգւոց մերոց:

Վանեցաւ մոլորութիւն որ ի չարէն վարդապետեալ.
եւ ծաղկեցաւ ճշմարտութիւն ի քէ մուծեալ յաշխարհ.
եւ եղեաք որդիք լուսո տարամերժեալք ի խաւարի.
վասն լուսո գործոց բարեաց երանելի մարտիրոսացն:

Տուրնջեամբ պայծառացաք արեգակամբն արդարութեան.
եւ վկաիցն արեամբ ցնծամք մատուցողաց զայն ի նուէր.
եւ պարեմք կրկնակաւք տանիւք մերո ազատութե.
յաւդեցելովք զեղեցկապէս ըստ վանքման իւրակութի:

Թախձանան ընդ զաւրութի երկնից ժողովք առաքինեացն.
եւ բերկրալի հաին դիմաւք ի հանդիսիցն իւրեանց ըսկիլդն.
ընդ նոսա վանելով ի յաղթանակս աշխատութեցն.
որպէս եղեն հաղորդ նմա ի չարչարանս ճեպելով:

Յանկացան մահու նորա անբերելի յաւժարութեամբ.
եւ մատնեցին զանձինս իւրեանց ի նեղութիւն անտանելիս.
ունակութե սիրո նորա բոցակիղեալք եւ տապացեալք.
ի զովացումն դիմեցին որպէս յաղբիւր քաղցրահոսան:

Իւրաքանչիւրդ վկաիցն առանձնակի յաւժարութեամբ.
հասարակաց բերին աւզուտ վիրաւք ցաւոց եւ տանջանաց.
զամբառնալ հողանիւթիցս ի լուսերամ ջոկս անմորմնոցն.

15 նորահ: Թ. «Մամկական խուճք հաղարաց եւ երեսնից թիւ ընդ վեցից».
մեր ձեռագրում—«թիւն վեցից»:

16 » Գ. «դասակցեալ ընդ անմարմնոցն երրորդութեանն երգել զփառս»:

47 Տես թիւ 14.

եւ վաեղեալ յուսով արդեան ի պատրաստեալ նոցա պարզեան:
 Փութացան դառնալ ի նոյն յորմէ անդաք խարէութեամբ.
 եւ բղպատիւ կերպարանին ի սկըզբնատպին դարձեալ առնուլ
 եւ զառաջին փառացն բզգեսան անձառելի յաւրինուածով:
 թաղաւորեալ ընդ քի յանապական արքայութեանն:
 Քաղաքին պաճուձելո ի բիւրակերպ դեղեցկութեանց.
 յորում ոչ է խռովութի եւ ոչ մահու իշխանութի
 ժառանգորդք եղեն վկայքն ըստ սահմանի անշուշտ խոտամանցն.
 եւ տիրապէս հաստատութի դանձառ բարխըն վայելողք:
 «Հարցն զմարտիրոսացն. Ար զհրաշափառն ասայ: Մկ. զարիայելքն»
 թղ. 200^ր 204^ր:

Մի քանի խօսք շարականիս՝ մեր ենթադրած հեղինակի մասին:

Շարականիս այբբենական կարգը՝ նորա գերիմաստ եւ վսեմ նիւթը՝ նրա համեղ եւ կուկիկ հայկարանութիւնը եւ շատ քիչ հատուածներն մէջ հետեւողութեամբ մտցրած բառերի եւ ոճերի դարձուածքները զարմանալի նմանութիւն ունենալով Արդանանց «Մորահրաշ պսակաւոր» շարականի գրութեան եւ նիւթին՝ որի հեղինակը ծանաչուում է սուրբն Մերսէս Շնորհալի, արդ՝ շարականս կարդալուց յետ անկարելի է որ բանագէտ ընթերցողը այս եղբակացութեան չգոյ եւ չգատի, որ կամ այս շարականն եւս գրել է Հռոմկլայի քնարերգուն՝ նա ինքն սուրբն Մերսէս, կամ թէ առատամիտ Մերսէսը զարմանալի ձարատարութեամբ նմանեցրել է իւր գրուածքը սըրանս եթէ ենթադրենք, որ սա իւր շարականից յառաջ է գրուած: Թէ այսպէս թէ այնպէս թէ այս շարականը հրեշտակարօն Մերսէսի գրչի պտուղ չէր կարող լինել եւս համոզուում եմ այն կէտից, որ նախ՝ Մերսէսի պատուական գրուածքների թանաքը դեռ չըջորացած, իրեն գրուող եւ մեծարող ժողովրդեան թախանձամբ նոքա կամ կարդացում էին եկեղեցիներում կամ ինքն Մերսէսը այլ եւ այլ հանգամանքներից ստիպուած բազմութիւ օրինակներով հանում եւ ցրում էր նրանց ի տես աշխարհի, դեռ չեմ յիշում եւ այն որ Մերսէսի ժամանակ հացի եւ ջրի

տեղ ծառայելով զիտութիւն եւ ուսումն հետեւապէս եւ անպակաս լինելով ազգիս ցաւերը գրող եւ ուսումնական անձինք, անկարելի էր որ նրանցից մէկն ու մէկը ի զիտութիւն ապագայի չյիշատակէր իւր յուշարձանում թէ այս երգի հեղինակն եւս եղել է ինքը սուրբն Մերսէս:

Շարականս սուրբ Մերսէսին չընծայելու մեր մի փաստն էլ այս է, որ Մերսէս սովորաբար իւր յիշեալ շարականի մէջ զիմելով համարձակ բացականչութիւններով Աւարայրում արիւնսների ընկած հայ նահատակներին եւ յականէ յանուանէ յառաջ կանչելով նրանց իւր սուր գրչի դիմաց, այլ իմն հրճուանքով դովում եւ դրուատում է Մա ամէն մէկին սուրբ պատերազմի մէջ պարսից դէմ ցոյց տուած իւր արիական քաջութեան եւ անվհերութեան համար, այն ինչ այդ տեսակ հայրական բացականչութիւններ չկան սոյն շարականիս մէջ, իսկ այդ անուամ է շարականիս յարգելի հեղինակը լռելեայն մեղմ եւ խուլ, այլ իմն եզանակով ու սրտով զովաբանելով Աւարայրի մարտադիր քաջերի դերօրինակ գործքն աւարաբքը:

Այսպէս ուրեմն շարականիս հեղինակը սուրբն Մերսէս չլինելով, այժմ դիմենք այլ միջոցների եւ դանենք թէ ո՞վ է եղել պատմութեանց էջերում իւր խոնարհ գլուխը թագցնող այդ մեղրարեւրան Յոհաննէսը:

Սկեղեցական մատենագրութեան կարգաւս. Մերսէս Շնորհալու ժամանակից 48 տարի

բարձրանալով դէպի վեր (1117—1165), Յովհաննէս անուստէ հայ եկեղեցուն գրով ու գրքով ծառայող և յայտնի շարական գրող մենք զտնուումենք միայն ջանասէր Յովհաննէս սարկաւազ կոչեցեալ վարդապետին որը իւր շատ գրական հիւթալի վաստակների հետ տուեց մեզ նաև սուրբ Ղևոնդեանց վերայ յօրինած «Պայծառացան այսօր սուրբ եկեղեցիք» գեղեցկահիւս շարականը, սակայն ի նկատի ունելով «Անթառամ սիրոյ ծնունդք» շարականիս մէջ արքայապայել կերպով ծանր ծանր նստած ու կանգնած հին հին ոճերի գեղեցկութիւնը, փարթամ փարթամ բառերի անլուծանելի հանգոյցով իրար հետ բռնուած ներդաշնակ միութիւնը, զնենք սրանց վերայ հնութեան ակն յայտնի նշմարանք կրող և իւր աննման լեզուն, բնաւ երբէք այս գրուածքը չէ համապատասխանում Յովհաննէս սարկաւազի գրուածքին: Չմտանամ ասել և այս որ եթէ սարկաւազի մտքի ծնունդ լինէր նա, անշուշտ իւր ժամանակի բազմաթիւ և ճշմարտախօս մատենագրներից մէկն ու մէկը կմտանէր նրան մեր ձեռքը: Թիւրդ դարումս ուր ապրում էր մեր խնայողուն Յովհաննէսը, այդ դարում գրեթէ ոչ մի գրական արդիւնք չէ կորեր:

Յովհաննէս սարկաւազ վարդապետի ժամանակից 397 տարի սլանալով դէպի վեր (720—1117) մենք կգտնենք Թէոդորոս Քոթեանաորի աշակերտ՝ չարազանդ Պօղիկեանց դէմ իւր թէժ հաւատով և առ Եկեղեցին ունեցած իւր տաք սրտով կռուող իմաստասէր կոչուած Յոհան Օձնեցուն, որի վարքը, ուսումը և գրուածքը ս. Գրքին մօտեցնելու համար, նրա հոգեզգօն վարժապետը ձեռքը զնելով Աստուածաշնչի վերայ ասում էր իրեն, «Այր մանր զմատենագ զայդ», 1 և արդարև յաճախ յաճախ ուտելով նա այդ անմահացուցիչ մանանայն, պտղաբերեց մեզ համար համաձայն իւր անուանն Մեծ Տօնէր կոչուած տօների շարականները, այլ և Երրորդութեան անունով երեք տառից մի

տուն կազմած և այբբենական կարգով շարադրած ս. Հռիփսիմեանց վեմադոյն Համբարձին—«Անսկիզբն բանն աստուած, որ վասն մեր համբեր մահու» 2), ուր տօնելի քահանայապետը առանց բացականչութեան և սրտի խրուովութեան ձիշտ կոմիտասս Հայրապետի քաղցր լեզուով լռիկ մնջիկ ստորագրում է սրբոց Հռիփսիմեանց անմեղ և աննման կուսանաց ամբիժ վարքը՝ ասելով,—«Անթաղրեալք զմահու խրոխտումն ընդդէմ մեզացն վառեցան, մերժեցին կործանեցին զմահահոտ զմեքնայսն», նրանց հոգւոյ քաջութիւնը և առ Փրկիչն աշխարհի անբացատրելի սէրը՝ ասելով,—«Հրով հոգւոյն զինու վառեալք զհալածիչսն վանեցին, ծաղիկ նիւթեղէնք՝ յաննիւթ ծաղիկն յօգեցան», նրանց կրած անտանելի չաչարանքը՝ ասելով,—«Լիանօք և բերանօք զարեան վտական հոսեցին, երջանիկ ճակատամարտք յայտնեցան անպարտելիք», նրանց վերջին անգամ այս անցաւոր աշխարհից մի բան վերցնելը և վերջին անգամ այս աշխարհից բերկրական հրաժեշտով բաժանուելը՝ ասելով—«Վերառեալ վիայօրէն զմարդարիտն հաւատոյ տենչացեալ անձառ լուսոյն վերախաղցան ի կեանս անմահ: Ահա այս պատուական գրուածքի հեղինակին ենք ընծայում որպէս «Անթառամ սիրոյ ծնունդքը», այսպէս էլ և սուրբ Ղևոնդեանց Գ. «Անձառելի բանդ աստուած» Մանկունքը, որը և մեր շարականի Գրիչը նոյնպէս ընծայում է Յոհան քահանային ասելով «զՂևոնդեանց անձառելի բանդ անձն վարդանացն, անթառամ սիրո ծնունդքն, Յոհաննու քհաի է ասացեալ» թղ. 223^ա:

Մենք կարծում ենք այս Յոհանը, Յոհան Օձնեցին է:

Այժմ մնում է մեզ մի տարակոտակի խնդիր ևս լուծել, այսինքն թէ, ի՞նչու Գրիչը գրել է «Յոհաննու քհաի է ասացեալ» և ոչ Յոհաննէս քահանայապետի:

Այս սխալները եթէ արել է մեր Գրիչը մենք

« Այս շարականը սովորաբար ընծայում է Յոհան Մանգակունուն, իսկ ոմանք Օձնեցւոյն տան աւելացնում է շարականների հեղինակաց ցանկը այս մասին կիսօտնէր յետոյ:

այդ վերագրում ենք միայն այն դէպքին՝ որ ինչպէս շատ գրիչներ ծանօթ չլինելով մեր ազգի մատենագրների խիսական անուան, նրանց գրուածքների և նոյն իսկ նրանց սպրաճ տարիներէ հետ մի բան արտագրելու ժամանակ շփոթել են իրար հետ և ընծայել մի գրուածք միւսին՝ մանաւանդ եթէ նրանց հեղինակները եղել են միեւնոյն անուան տէր մարդիկ, ինչպէս որ այս ակնյայանի պահատութիւնները մենք տեսնում ենք Յոհան Մանդակունու և Յոհան Օձնեցու գրած եկեղեցական կանոնների մէջ, ուստի ես ենթադրում եմ՝ որ մեր գրիչն ևս կամ «ՔՂԱ» բառը իւր հնագոյն շարահանների նման գրել է կրճատ թերեւս զօրութեամբ յիշեցնել տալով մեզ Յոհան Օձնեցուն, կամ նա արել է այդ սխալը անզիտու թեամբ, թերեւս ծանօթութիւն չունենալով Օձնեցու քահանայապետ լինելու մասին, և կամ թէ այդ սխալանքը արել է մի ուրիշ գրիչ և նա անփոփոխ արտագրել է միայն իւր ցուցակում, ապա թէ ոչ Ռորդ դարից մինչև ԺԳ-րդ դարը բացի վշտակիր Յովհաննէս պատմարան քահանայապետից ինչ բազմահանձար Յոհաննէս քահանայ ունինք՝ որ կարողանար գրել «Անթառամ սիրոյ ծնունդը» «Անսկիզբն բանդ աստուած» և «Անձառելի բանդ ամ» որոց նիւթը կարծես թէ մտածուած լինին մի օրում, և գրուած մի օրում:

Այս երեք շարահանները Յոհան Օձնեցուն ընծայելու համար եթէ մի ուրիշ փաստ չունենանք, բաւական են միայն նախ այն փոքր ասարբերութիւնները, որոնք զանում ենք վերջին երկու շարահանների մէջ, և որոնք նոյն իսկ սկզբից բառով ու բանով համապատասխանում են իրար հետ.

«Անսկիզբն բանդ, աստուած որ վասն մեր համբեր մահու»:

«Անձառելի բանդ աստուած որ վասն մեր ելեր ի խաչ»:

Երկրորդ, թէ տպագիր և թէ ձեռագիր շարահանները Յոհան Օձնեցուն են ընծայում այն երեւելի շարահանները, որոնք գրուած են Աւագ տօներէ վերայ, սակայն մենք զիտենք

պատմութիւնից, որ Հայաստանեայց եկեղեցին ս. Ղուկասիանայ, ս. Ղեւոնդեանց և ս. Արարիանայ տօները երբէք փոքր տօներ չէ համարել, և այս տօները իրենց սկզբնաւորութեան օրից ընդ միշտ տօնուել և կատարուել են աւելի շքեղ, աւելի փառաւոր հանդէսներով, քան թէ Ռաւիթ մարգարէի, Ստեփաննոս նախավկայի, Որդւոյն Որոտման և Պետրոսի և Պօղոսի առաքելոց տօները:

Ուստի եթէ համոզուցուցիչ են մեզ համար Շարահանների տուած այն վկայութիւնները, որ յիշեալ տօների շարահանները գրել է Յոհան Օձնեցի Հայրապետի պէս մի տաղանդաւոր գրիչ, նոյնչափ պիտի համոզուած լինինք, որ յիշեալ երեք շարահանները գրել է նոյն հանձարեղ Հայրապետը, որոց ճշգրիտ ապացոյց միայն կարող են լինել ս. նրանց այրենական կարգն ու դասաւորութիւնը. ք. նրանց յար և նման սահուն և ընտիր լեզուն և նիւթը, և ք. նրանց միեւնոյն շափով և միեւնոյն ուղղութեամբ սկսուելը և վերջանալը:

Այս երեք շարահանները Ս. Յոհան Օձնեցուն ընծայելու իբրև մեր վերջին փաստ մէջ ենք բերում և նորա գրած իմաստալից ձևերից մի քանի հատուածներ, որոց մէջ ցոլացած համանման դեղեցիկ բառերի, խօսքերի, դարձուածքների և ոճերի տիպն ու նմանութիւնը ոչ միայն մենք պարզապէս տեսնում ենք և այդ շարահանների մէջ, այլ և նոքա ծայրէ ծայր կարծես թէ մի տեսակ ճրուագալ լինին արուած իւր ձևերից ճիշտ այնպէս, ինչպէս մի խնկելի պարտիզից անզիտու թեամբ կամ զիտութեամբ փոխադրէինք մի ուրիշ պարտեղ նոյնանման տունկեր. մի գերօրինակ հմտութիւն՝ որով սուրբ Օձնեցին առանց մի քայլ անգամ շեղուելու իւր պերճախօս լեզուից, իւր զեղուն բառ ու բառից ու բանից և միանգամայն իւր քրիստոնէական բուն սիրուց և վառ ոգևորութիւնից, եթէ կարելի է այսպէս ասել, կազմել է իւր գրած շարահաններից ձևեր, իսկ իւր գրած ձևերից շարահաններ. զօ.

«Եւ ընդ գաղանացն կուուել յարձակմունս՝ զի մի . . . ցրուեսցին . . . զեղեցկապէս միա որեւէ քրիստոսի անգամքն» 4.

«Քարեփառութեան զամբարօք փայլեալ սրտնաւանային» 57.

«Ի բաց յինքնէ հալածէր զմահն և զպականութիւն . . . անձառելեաց երթեալ հանդիպանայր կենաց» 69.

«Աստուածայնովն զինսզարդեալ սպասագինութեամբ հաւաքեսցուք ի հեղեղազնաց կենցաղոյս» 46.

«Նոյնանիշ բառերով . . . Ծառայեցուցանել զճառայեցուցիչն հրամայեաց ծառայեցելոյն» 75.

«Ամաւորապէս կրել կարողութիւն է միայն քրիստոսի (զարչարանս) և որք ի նմանէ զօրացեալք գորգեգրութեանն արժանաւորեցան ընդունել փարս» 78.

«Ի վերայ երկրի զերկնայնոցն հանդիսանան կուտարել վարս» 39.

«Ազա . . . ընդ յատակս բագնին տապալեալ ցրուէր զկուռս կուպաշտիցն աստուածպաշտութեան շափոցուցանելով» 44.

«Եկեղեցիք հաւատացելոց աստուածսիրութեանն փափագանօք շինեցան» 40.

«Տնկադործողին անկեւ զգրախոս և ի նմա զնելով զմարզն հրամայեաց անցուտ վայելել նմա» 67.

«Կեղեցկազոյն հաւատոյ օտիւք առ ճշմարտութիւնն ի վեր կանգնեալ» 54.

«Ի բաց վանել զչարութիւն բանասրկութիւն և զբոլոր տիեզերս հնազանդեցուցանել ընդ առաքելական քարոզութեամբն» 106.

«Ինելով յիմաստութեանց մերոց պարաստիկս . . . ջաղխեսցուք զվեհագոյն . . . ի նոսա անդամ . . . աւարտանելով և գերելով զհպարտացեալ նոցա խորհուրդս» 46.

«Անյողգողգիլի հաւատով զՆորայն հիմնեցուցին զեկեղեցի» 63.

«Մեծագոչ հնչմամբ ազաղակեմք ի յընդհանուր . . . արարածոց տեսակս ասելով - Օրհնեցէր ամենայն գործք տեսն զտէր» 19.

«Եւ . . . թուժկալեալք ի փորձ բանտից գելարանաց և կազանաց ի մրցմունս գաղանաց սրոյ և հրոյ մենամարտեալք».

«Եւ զամբարամբ լուսոյ կենաց զխաւար մեղաց փարատեցին».

«Եւ յաղթեցին կարեաց մարմնոյ և հեշտալի զրդանաց . . . շնորհազարգ փայլմամբ փայլեալք ի յերկնային նաւահանգիստն».

«Եւ վերատեալ վայօրէն զմարգարիտն հաւատոյ . . . վերապացան ի կեանս անմահ».

«Եւ շարաչսր շարչարանօք զշարին մութհակն կապտեցին».

«Եւ . . . ծաւալեալ զլոյս գիտութեան յոգիս արանց կատարելոց կամաւոր յօժարութեամբ կատարեցան յանօրինաց».

«Եւ թօթափեալք զբուն մահու զուարթնոց երկնից հետեցան».

«Եւ զեկամարք հողերք զալիս մեղաց խորտակեցին ճանապարհ մեղ հորդեցին ի յերկնային նաւահանգիստն».

«Եւ յառաջեալ յամենեցունց յովսէփ ընտրեալ յաշակերտացն . . . շինեցաւ տաճար փառաց սրբութեան անմահ բանին».

«Եւ . . . թնկադործ աղին գրախոսին որ տնկեցեր յերկրի զխաչն».

«Եւ թնչմամբ վառեալք ի կենցաղունս առ ի ըստացունս փութացեալք երազաքայլ օտիւք հոյուց».

«Եւ երկնաւոր թաղաւորին զինուորեցայք արիւմար առ ի վանումն բանասրկութիւն . . . նահատակեալք քաջութեամբ արկէք տապաստ զմոլորեալսն».

«Եւ շնորաբանչ զարմանալեօք ընտրես ծառայք և վկայս և գործակեցալ նոցա ի մարտ գերես զամուրս և զխորհուրդս».

«Եւ յամրացուցեր զեկեղեցի վկայից քոց բազմութեամբ ի քեզ յօդեալ առաքիւնեաց».

«Եւ շնորհեցեր զհեռացեալսն մեծագոչ փողոյն ձայնիւ գալ ի տաճար . . . ի սեանց եօթանց հաստատեցոց».

